**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 14-ը հունիսի 2019թ.
ժամը $14^{00}$

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝*

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, Ա. Մուրադյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԾ առաջատար մասնագետ, Ռ. Չաթոյան,

**հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1.1 **14.06.2019թ.-ին** ժամը 14:00-ին կայացած նիստում փաստաթղթերի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշեց **«Երվադա», «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել բավարար՝ հրավերի պահաջներին համապատասխան:

1.2 Ընդունել ի գիտություն՝ **19-րդ չափաբաժնի մասով «Վագարթ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի գնահատումն իրականացնելիս, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը:

Քննարկելով **«Նարսան» ՍՊԸ-ի** կողմից **11.06.2019թ.** ծանուցմամբ պահանջված անահամապատասխանությունները, գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ ներկայացված փաստաթղթերը շտկվել են մասամբ, մասնավորապես՝ մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված **01.06.2018թ. կնքված ԳՀԱՊՁԲ-10/19-10** ծածկագրով գնման պայմանագրի հաշիվ-ապրանքագիրը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ընդունման-հանձնման N5 արձանագրությունը ապրանքն ընդունողի կողմից ստորագրված և հաստատված չեն (հաստատված տարբերակները մասնակցի կողմից ուղարկվեցին, սակայն սահմանված ժամկետից հետո, որը հանձնաժողովի կողմից չքննարկվեց):

**Առկա անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեությամբ «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ)** կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չներկայացվեց: Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվեց սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեց:

**«Վագիմպորտ» ՍՊԸ-ի** կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված **30.05.2018թ. կնքված ՆԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/167-1** ծածկագրով գնման պայմանագրին կից ներկայացված՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ընդունման-հանձնման արձանագրությունների ընդհանուր գումարը ավելի քիչ էր, քան պայմանագրով նշված գումարն էր: **10.01.2017թ. կնքված ՆԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/38-14** ծածկագրով կնքված պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 2,937,000 ՀՀ դրամ, 07-ը սեպտեմբերի 2017թ. պայմանագրին կից կնքվել է պայմանագրի ծավալի ավելացման համաձայնագիր N1, ըստ որի պայմանագրի գինն ավելացվել է ևս 581,000 ՀՀ դրամի չափով և վերը նշված պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 3,518,000 ՀՀ դրամ, ներկայացված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար հավաստող հաշիվ-ապրանքագիր ընդհանուր գումարը ավելին է, քան պայմանագրի ընդհանուր գումարը, իսկ տվյալ

պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ընդունման-հանձնման արձանագրությունների ընդհանուր գումարը պակաս է պայմանագրի ընդհանուր գնից, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, գնահատող հանձնաժողովը որոշեց **«Վագիմպորտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատելու համար ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել հրավերի հրավերի պահանջներին ոչ համապատասխան:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց **«Նարսան», «Վիէյչ Գրուպ» (համատեղ գործունեությամբ «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ)** և **«Վագիմպորտ»** ՍՊԸ-ների ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջիններիս հայտերը:

1.4 Հանձնաժողովը որոշեց «**Նարսան», «Վիէյչ Գրուպ» (համատեղ գործունեությամբ «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ)** և **«Վագիմպորտ»** ՍՊԸ-ների տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.5 «**Նարսան» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել ***«ՄԱՆԳՈՒԳ» ՍՊԸ-ին***, **«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն,** որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս **Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ** մերժման արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ ***«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին***, իսկ **«Վագիմպորտ» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել ***«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ին***

1.6 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և «ՄԱՆԳՈՒԳ», «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» և **«Վագիմպորտ»** ՍՊԸ-ներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

1.7 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Մուրադյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Ռ. Չաթոյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |